Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Բերդավանի միջնակարգ դպրոց

Թեմա՝ Համընդհանուր ներառականության առավելությունները ու բացթողումները

Վերապատրաստող, մենթոր՝ Մարինե Ղարագյոզյան

Կատարող՝ Արմինե Թորոսյան

Բերդավան 2023

Բովանդակություն

1. Ներածություն 3-4
2. Ինչ է ներառական կրթությունը 4-20
3. Համընդհանուր ներառական կրթության առավելությունները և բացթողումները 21-24
4. Եզրակացություն 25-26
5. Գրականություն 27

Ներածություն

2012թ-ին ՀՀ ԿԳՆ հանդես եկավ մի նախաձեռնությամբ ,որի համաձայն շրջանառությունից պետք է հանել ԿԱՊԿՈՒ անձանց կրթության մասին օրենքը և այն ներառել հանրակրթության օրենքի մեջ `բոլոր հնարավոր տարբերակված մոտեցումներից խուսափելու համար:ԵՎ դա նշանակում է ,որ ՀՀ-ում գործող բոլոր հանրակրթական դպրոցներն ինքնըստինքյան պետք է դառնան ներառական: Ներառական կրթությունը տեղի է ունենում այն ժամանակ ,երբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և չունեցող երեխաները մասնակցում և միասին սովորում են նույն դասարանում:Այն նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը `հաստատելով ,նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ: Որակյալ կրթության իրական երեք ցուցանիշներն են`մասնակցություն,համագործակցություն,հավասարություն:Կրթության իրավունքը վերաբերում է բոլորին,ցավոք ,բազմաթիվ երեխաներ դեռևս դուրս են մնացել կրթությունից կամ մեկուսացվել են կրթական համակարգում,հատկապես հիմա , երբ ներառական կրթության գաղափարը դեռ լիովին չի ընդունվել Հայաստանի Հանրապետության դպրոցների և հասարակության կողմից:

Ներկա ժամանակներում լուրջ խնդիրներից է համարվում երեխաների և հատկապես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների զարգացմանն ու կրթությանը խոչընդոտող հանգամանքները: Հատուկ կարիքներ ունեցող երեխաների կրթությունը կազմակերպելու համար լավագույն լուծումն է ներառական կրթությունը:

Ներառական կրթությունը կրթական համակարգ է, որն ուղղված է հավասար կրթության ապահովմանը և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող մարդկանց ներգրավվածությունը: Ներառական կրթությունը ավելի մատչելի է դարձնում կրթությունը բոլորի համար:

Ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում:

Ներառական կրթություն նշանակում է, որ դպրոցը կարողանում է լավ կրթություն տրամադրել բոլոր երեխաներին,անկախ նրանց տարատեսակ կարողություններից: Բոլոր երեխաները պետք է հարգալից վերաբերմունքի արժանանան և ստանան հավասար հնարավորություններ համատեղ սովորելու համար:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է գնահատել ՀՀ-ում ներառական կրթության առկա վիճակը՝վերհանելով ձեռքբերումներն ու խնդիրները,որոնք հիմք կհանդիսանան համակարգի հետագա բարեփոխումների ընթացքում որոշումների կայացման համար:Հետազոտությունը անդրադարձել է ՀՀ-ում ներառական կրթության համակարգի ձևավորման և զարգացման հեռանկարին,համակարգի ձեռքբերումները և կենսունակության հնարավորությունները և համընդհանուր ներառականության պատրասվածության աստիճանը:

Ինչ է ներառական կրթությունը

Ներառական կրթությունը գործընթաց է ,որը հենվում է բոլոր երեխաների ,այդ թվում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքի վրա:Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին,մեծացնում է մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազացնում է բացառումը կրթությունից ,ընդգրկում է փոփոխություններ և բարեփոխումներ կրթության բովանդակության մեջ ,մոտեցումներում ,կառույցներում և մեթոդներում ,տարածվում է համապատասխան տարիքային խմբի բոլոր երեխաների վրա և հենված է այն համոզմունքի վրա ,որ բոլոր երեխաներին կրթելը հանրակրթական համակարգի պարտականությունն է :Սույն կրթական մոդելի պատմական ընթացքի վերլուծությունը ցույց է տալիս ,որ այն այսօրվա ըմբռմամբ ,ծագում է հատուկ կրթությունից:
Հատուկ կրթության զարգացումն անցել է մի շարք փուլերով , որոնց ընթացքում ուսումնասիրվել են հաշմանդամ երեխաների և սովորելու դժվարություններ ունեցող աշակերտների կարիքների բավարարման տարբեր ուղիներ:Որոշ դեպքերում հատուկ կրթությունը լրացրել է հանրակրթությունը ,իսկ այլ դեպքերում եղել է լրիվ առանձնացված:Վերջին տարիներին կասկածի տակ է դրվել առանձնացված կրթական համակարգերի նպատակահարմարությունը `ինչպես մարդու իրավունքների ,այնպես էլ արդյունավետության տեսանկյուններից:

Կրթությունը պետք է համարվի ցանկացած անձի մարդկային ու ֆունկցիոնալ զարգացմանը նպաստող միջոց`անկախ ֆիզիկական կամ այլ խոչնդոտներից : Ուստի ,որևէ տեսակի հաշմանդամություն չի կարող արգելք լինել մարդու կրթություն ստանալու իրավունքի համար:

Այսպիսով ներառումը ենթադրում է մի գործընթացի ծավալում , որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին `ներառյալ նրանց ,ովքեր ենթակա են մեկուսացման :

Ներառական կրթության առավելություններն են`

- ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, այլև ոչ թե երեխայի հարմարեցում

- ներառումը ԿԱՊԿՈՒ ունեցող երեխաներին հնարավորություն կտա կրթություն
- ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից:
- ներառական կրթությունը օգնում է հաղթահարել խտրականությունը
- ներառական կրթությունը նպաստում է ավելի լայն ներառման

Հատուկ կարիքներով երեխաների ընդունումը, հանրակրթական դպրոցներին կստիպի ուսուցիչներին մշակել նոր՝դեպի երեխան կողմնորոշված մեթոդիկաներ, ապահովել մեծ թվով մասնակիցների ընդգրկվածությունը ուսումնական գործընթացում: Դրանից օգուտ կստանան բոլոր երեխաները:

Տեսագործնական հետազոտությունների արդյունքում բազմաթիվ ուսուցիչների կարծիքով հատուկ կարիքներով երեխաների ուսուցման համար անհրաժեշտ կլինի հատուկ հմտություններ: Սակայն, փորձը ցույց է տալիս ,որ հատուկ կարիքներով երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենը անհրաժեշտ է որակյալ հասկանալի և մատչելի դասավանդում,որը և նպաստում է աշակերտների ակտիվության բարձրացմանը:

Հասարակության մեջ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ կանխակալ վերաբերմունքը բավական ամուր է արմատավորված: Պատճառներն են՝ տեղեկատվության և հատուկ կարիքներով մարդկանց մասին ունեցած գիտելիքների, նրանց հարևանությամբ ապրելու փորձի բացակայությունը կամ պակասը:
Եթե հատուկ կարիքներով երեխաները ևս հաճախեն նույն դպրոց, ինչ -որ մնացածները ,ապա բոլորի մեջ կձևավորվի անկանխակալ վերաբերմունք հատուկ կարիքներով մարդկանց նկատմամբ:Արդյունքում ,ապագա քաղաքացիների մոտ կարմատավորվի այն գիտակցությունը ,որ հատուկ կարիքներով երեխաները ևս հասարակության լիիրավ անդամներ են:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ,ինչպես նաև աղքատ ընտանիքների երեխաներին ու մեծահասակներին,ներառական կրթությունը հնարավորություն է տալիս դիմակայելու նախապաշարումներին,օգնում է նրանց դուրս գալու ստվերից ,կառուցել սեփական ապագան և դառնալ հասարակության լիիրավ անդամ:

Հաշմանդամության ծրագրերի մշակման մեթոդիկայում ներառական կրթությունը արտացոլում է երկու ուղղություն.

1. Աջակցության նպատակային այնպիսի նախաձեռնություններ,որոնք միտված են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ու նրանց ընտանիքների ներուժը ուղղորդելու և իրացնելու նպատակով ծավալվող գործունեության խթանմանը,հասարակական կյանքին նրանց լիիրավ մասնակցությանը,իրավունքներին ,պաշտպանությանը:
2. Մարտահրավեր է նետում հասարակության մեջ հատուկ կարիքներով մարդկանց նկատմամբ ձևավորված և կայունացած կանխակալ վերաբերմունքին,օգնում է ծնողներին դրականորեն ընկալել զարգացման խնդիրներ ունեցող իրենց երեխաներին և նպաստում է սոցիալապես առավել ներառմանը:

Ներառական կրթությունը որպես արդի հիմնահարց

Այսօր բավականին բուռն զարգացում է ապրում <<Կրթություն բոլորի համար>>կարգախոսը,որի նպատակն է ուսուցումը հասանելի դարձնել հասարակության այն խմբին որը կենսագործունեության սահմանափակ հնարավորությունների պատճառով դուրս է մնացել դրանից:

<<Կրթություն բոլորի համար>> կարգախոսի համաձայն քայլեր են կատարվում նաև մեր երկրում:Այդ են վկայում ակտիվ գործունեություն ծավալող մի շարք հասարակական կազմակերպություններ,որոնք օժանդակում են ՀՀ մի շարք դպրոցներում իրականացվող ներառական կրթությանը:Ներկայումս ՀՀ-ում գործում են և հատուկ դպրոցներ՝տեսողության,լսողության,խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների ,և միջնակարգ հանրակրթական դպրոցներ ,որտեղ սովորում են ֆիզիկական և մտավոր խնդիրներ չունեցող երեխաներ:Դեռևս Վիգոցսկին կարևոր է համարել այնպիսի համակարգի ստեղծումը ,որը հնարավորություն կտա հատուկ կարիքավոր երեխաների ուսուցումը իրականացնել նորմալ զարգացում ունեցող երեխաների ուսուցման հետ համատեղ:Նա գտնում է ,որ երեխաների առանձնացումը հատուկ հաստատություններում ավելի է նպաստում նրանց հոգեկանի խանգարմանը:

Ներառական ուսուցումը `ուսուցման առանձնահատուկ կարիք ունեցող երեխայի համատեղ ուսուցումն է իր հասակակիցների հետ հանրակրթական դպրոցում:Ներառական ուսուցման ելակետային հասկացությունն այն է,որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան ,որն ունի կենսագործունեության սահմանափակ հնարավորություններ չի հարմարեցվում հասարակության օրենքներին և պայմաններին ,այլ ներառվում է հասարակական կյանք հատուկ պայմաններով,որը հասարակությունը հասկանում և հաշվի է առնում: Այսպիսով ,ներառական կրթությունը ներկայացնում է կրթության գործընթացում բոլոր սովորողների այդ թվում նաև զարգացման խանգարումներ ունեցողների մասնակցության ընդլայնման պրոցեսը:
Այն ենթադրում է հիմնարար փոփոխություններ դպրոցների մշակույթում ,քաղաքականության և պրակտիկ գործունեության մեջ՝որոշակի վայրում սովորողների շրջանի բազմազանությանը համապատասխան :

Ներառական կրթությունը տարբերվում է հատուկ կրթությունից ,որն ունի իրականացման մի քանի ձև ,այդ թվում նաև `հատուկ դպրոցներ ,փոքրիկ ստորաբաժանումներ,հատուկ միջոցների օգնությամբ առանձին երեխայի ինտեգրում:

Հատուկ կրթությունը զարգացել է որպես հատուկ կարիքներով երեխաների համար կրթության համակարգ՝հանրակրթական համակարգից առանձին և կառուցված այն ենթադրության վրա,թե այդ երեխաների պահանջմունքները չեն կարող բավարարվել հանրակրթական հաստատություններում:

Ներառական կրթության կարևորությունը .այն ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում:

Ներառական կրթություն .խոսքը հենց հանրակրթական դպրոցներում հատուկ կարիքներով երեխաների ուսուցման արդյունավետության մասին է /ամբողջ ուշադրությունը `ուսուցման որակին/:
Սովորողների անհատական առանձնահատկությունները պետք է ընդունվեն և խրախուսվեն որպես ներառման գործընթացի մաս:

Կրթությունը տալիս է `գործնական հմտություններ և գիտելիքներ ,որոնք անհրաժեշտ են աղքատության արատավոր շրջանը խզելու համար:Իսկ ներառական կրթությունը նաև հատուկ կարիքներով երեխաներին ու մեծահասակներին հնարավորություն է տալիս դիմակայելու նախապաշարումներին, օգնում է նրանց դուրս գալ ստվերից սեփական տեսակետն արտահայտելիս ավելի ինքնավստահ լինել,ինքնուրույն կառուցել սեփական ապագան հասարակության մեջ :

Ներառական կրթություն ներդնում են բազմաթիվ երկրներ`կրթության համեմատաբար համեստ բյուջեով և տեխնիկական միջոցների փոքր ծավալով:Այս գործունեության դրական արդյունքներից է դասավանդման որակի բարձրացումն ու սովորողների ձեռքբերումները:Ներառական կրթության շնորհիվ հնարավոր կլինի հաղթահարել խտրականությունը,որը բույն է դրել մարդկանց մեջ և շարունակում է կրծել նրանց հոգիները:
Այս ծրագիրը օգտակար է բոլորի համար :Զարգացման խնդիրներ չունեցող երեխաները օգուտ կստանան այդպիսի շփումից: Հատուկ կարիքներով իրենց հասակակիցներից նրանք շատ բան կսովորեն ,օրինակ՝ սոցիալական պատասխանատվություն :Մենք արդեն վաղուց հարց ենք տալիս `ինչպես կարելի է բավարարել յուրաքանչյուրի պահանջմունքները:
Եվ միայն այս ծրագրի սկսվելու հետ սկսեցինք հասկանալ՝ինչպես դա անել :Այն կանգնեցնելը նույնն է ,ինչ խնդրել զոջացող մեղավորներին վերադառնալ իր մեղքերին:Կրթությունը բոլորի համար է /:Լեսոտո 1990թ/:

Ներառական կրթությունը գնալով զարգանում է և հետևաբար տանում է ավելի մեծ ներառման:
Ներառական կրթությունը հնարավորություն է տալիս հասնելու երկու նպատակի.զարգացնում է գործունեությունը,որն օգնում է հատուկ կարիքներով երեխաներին ամբողջովին իրականացնել իրենց ներուժը, դառանալ ինքնուրույն և մանակցել իրենց համայնքի կյանքին:Միաժամանակ այն մարտահրավեր է նետում հասարակության մեջ կայունացած կանխակալ վերաբերմունքին ,օգնում է ծնողներին դրական ընկալել զարգացման խնդիրներ ունեցող իրենց երեխաներին,նպաստում է մեծ սոցիալական ներառմանը:

Ներառական որակյալ կրթություն. համագործակցություն, հավասարություն և մասնակցություն:Երեք քայլ, որ տանում է դեպի իրական ներառում

Թե ինչ խորությամբ է առանձին աշակերտը դիտարկվում որպես դժվարություններ ունեցող, կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով:Հատկապես անհրաժեշտ է նշել դպրոցի միջավայրը՝կազմակերպվածությունը,կիրառվող մեթոդները ,տիրող դժվարությունների վերացման հարցում:
Կարևորն այն է ,որ ախտորոշումը ,որն ընդգծում էր աշակերտի թերությունները այլևս չի դիտարկվելու:Հիմնական մոտեցումը պետք է բխի այն գաղափարի ընդունումից,որ յուրաքանչյուր աշակերտ կարող է սովորել և ստեղծագործել:
Դպրոցը պետք է պատասխանատվություն կրի ստեղծելու այնպիսի միջավայր,որ յուրաքանչյուր աշակերտ կարողանա սովորել և ստեղծագործել:Դպրոցի միջավայրը պետք է միտված լիի զարգացնելու յուրաքանչյուր աշակերտի ներուժը և կարողությունները:
Հաջորդ մոտեցումը չմեկուսացնելու սկզբունքն է ,որը ներառական որակյալ կրթության գաղափարախոսության երրորդ հիմնաքարն է և վերաբերում է բոլոր սովորողների կարիքներին:Բոլոր խնդիրներն իրենց հանգուցալուծումները պետք է ստանան դպրոցի ներսում:Կազմակերպվածությունն ու ռեսուրսների հատկացումը պետք է բավարար չափով ճկուն լինել,որպեսզի հնարավոր լինի անհրաժեշտ աջակցությունը տրամադրել անմիջապես դասարանում:

Կրթության հետ կապված խնդիրները ,որ աշակերտները կարող են ունենալ,պետք է շարունակական քննարկվեն դպրոցի մանկավարժների և հատուկ մանկավարժական աջակցության թիմի անդամների հետ համատեղ:Դրա նպատակն է հնարավորինս վաղ կանխել հնարավոր խնդիրները՝արագ առաջարկելով հնարավոր լուծումներ:

Բացի վերը նշված երեք հիմնաքարերից,շատ որոշիչ է,որ դպրոցի անձնակազմը իր աշխատանքում որդեգրի երեք առավելապես կարևոր հասկացություններ,որոնք պետք է վեր դասվեն ուսումնական ծրագրից:

Դրանք որակյալ կրթության իրական երեք ցուցանիշներն են՝մասնակցություն, համագործակցություն և հավասարություն:

Դրանք պետք է ուղղորդող սկզբունքներ լինեն կրթության պլանավորման և իրականացման բոլոր գործընթացներում: Երբ բոլոր սովորողների համար ապահոված է լիարժեք մասնակցության և համագործակցության միջավայր և բոլորն ունեն զարգանալու հավասար հնարավորություններ ,ապա կարելի է ասել,որ կրթությունը բարձր որակի է:

Ներառական կրթության անհրաժեշտության հիմնավորումը

Մարդու իրավունքների և երեխաների իրավունքների հարցերում եղած պարտավորությունները պետք է հավասարապես քննարկվեն:

Այն բանի վերլուծությունը ,ինչը բացահայտում է յուրաքանչյուր երեխայի իրական հետաքրքրությունները որոշում է ,թե երեխայի համար ինչն է բարիք:Փաստերը խոսում են այն մասին,որ ինստիտուցիոնալ խնամակալությունը/օրինակ՝գիշերօթիկներում ,գիշերօթիկ -դպրոցներում/ ոչ միշտ է համապատասխանում խնամակալվող մարդկանց շահերին:

Տվյալների վերլուծությունը հավաստում է ,որ սոցիալական ծառայությունների գործունեությունը լավանում է այն բանի արդյունքում ,երբ դառնում է ավելի ճկուն ու հարվարվող:

Այն դեպքում ,երբ ռեսուրսները սահմանապակ են ,արդյունքը կարող են ձեռք բերվել առանց լրացուցիչ ռեսուրսների,եթե մասնակիցների վերաբերմունքը և վարքագիծը համապատասխանում են ներառման մեթոդաբանությանը:

Կարևոր է իմանալ ներառական կրթության որոշ հանգուցային սկղբունքներ ,թեկուզ նրա համար,որ <<չարտահանվի>>մեկ այլ մշակույթ և հանրություն,այլ իրացվի հենց սեփական գաղափարների և ընդհանուր սկզբունքների հիման վրա:

Երեխաները գնում են իրենց համայնքի(տան մոտ գտնվող)մանկապարտեզ և դպրոց:

Վաղ միջամտության ծրագրերը իրականացվում են ներառման սկզբունքի հիման վրա և պատրաստում են ինտեգրատիվ (ռուսաստանյան պրակտիկայում `/զուգակցված/,մանկապարտեզներ:Ուսուցման սահմանափակ հնարավորություններ ունեցող բոլոր երեխաները պետք է ունենան մանկապարտեզում տեղի իրավունք:

Մեթոդաբանությունը մշակվում է տարբեր ընդունակություններով երեխաների ուսուցմանը աջակցելու համար(սրանով լավանում է ոչ միայն հատուկ պահանջմունքներով երեխաների ուսուցման որակը,այլև բոլոր երեխաների ցուցանիշները):

Բոլոր երեխաները մասնակցում են այն բոլոր միջոցառումներին,որտեղ դասարանը և դպրոցական միջավայրը(մարզական միջոցառումներ,ներկայացումներ ,մրցույթներ,էքսկուրսիաներ և այլն)ներառական է:

Անհատական ուսուցումը աջակցության է արժանանում ուսուցիչների,ծնողների և այլ մասնագետների համատեղ աշխատանքի շնորհիվ:

Ներառական կրթությունը օգնում է կանխելու երեխաների նկատմամբ խտրականությունը և սատարում է հատուկ պահանջմունքներով երեխաներին `իրենց համայնքների և ողջ հասարակության իրավահավասար անդամներ լինելու,նրանց իրավունքում:

Ներառական կրթության իրականացումը ՀՀ-ում

Հայաստանի Հանրապետությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթությունը կարգավորվում է <<Կրթության մասին>>,<<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>>,<<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>>,<<Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին >>,<<Հայաստանի Հանրապետության Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենքներով:

<<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը սկիզբ դրեց հատուկ կրթական համակարգի բարեփոխումներին:Օրենքում ամրագրված է ,որ <<կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ,ծնողների ընտրությամբ,կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական ,այնպես էլ հատուկ դպրոցներում `հատուկ ծրագրերով:

Հանրակրթական համակարգին զուգընթաց հատուկ կրթության բարեփոխման ծրագիրը ևս հիմնված է հիմնարար երկու կրթության մատչելիության և որակի սկզբունքի վրա:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տեսանկյունից դա ենթադրում է հավասար պայմանների ստեղծում և կարիքին համապատասխան որակյալ կրթության հնարավորություն:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիմքի վրա .

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցում

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օտվելու հատուկ մանկավարժական,

առողջապահական,հոգեբանական,սոցիալական և այլ ծառայություններից՝անկախ նրանց ուսումնական հաստատության տիպից:

Երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը՝առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման:

Ներառական կրթական միջավայր ձևավորելու լավագույն գրավականը համագործակցային միջավայրի ստեղծումն է ինչպես դասարանում ,այնպես էլ դասարանից դուրս,երբ կրթական գործընթացը կազմակերպվում և իրականցվում է ոչ միայն տվյալ ուսումնական առարկան դասավանդող ուսուցչի ,այլև դասարանի բոլոր աշակերտների,անհրաժեշտության դեպքում նրանց ծնողների ,հատուկ մանկավարժների ,հոգեբանների ներգրավմամբ:Փոխօգնության սկզբունքի վրա հենված խմբային ուսուցման մեթոդների ճիշտ և նպատակային գործադրումը հնարավորություն է ընձեռում ապահովել ոչ միայն համագործակցային ուսումնական միջավայր,այլև բարձրացնում է մատուցվող ուսումնական նյութի ընկալման մակարդակը,աշակերտների միջև ձևավորում են գործնական -ուսումնական և ընկերային օբյեկտիվ հարաբերություններ.աշակերտները ճիշտ են գնահատում ոչ միայն սեփական կարողություններն ու արժանիքներն ,այլև համադասարանցիները:Սոցիալական առումով օբյեկտիվ միջաշակերտական հարաբերությունների առկայության դեպքում երեխաները սկսում են վերաբերվել կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողներին ոչ թե որպես օգնություն հայցողի ,այլ որպես գործընկերոջ:Ներառական կրթության իրականացման գործընթացում կարևորվում է բազմամասնագիտական թիմի գործունեությունը:Բազմամասնագիտական թիմի մեջ ներգրավվում են երեխայի կրթության համար շահագրգիռ տարբեր մասնագետները(դասավանդող ուսուցիչներ,դասղեկ,հատուկ մանկավարժ,հոգեբան ,սոցիալական աշխատող,լոգոպեդ) երեխայի ծնողը և համակարգողը:Թիմը գնահատում է յուրաքանչյուր երեխայի կրթական կարիքները ,հայտնաբերում է նրա առողջապահական և սոցիալական այն կարիքները ,որոնք կարող են ուղղակի ազդեցություն ունենալ երեխայի կրթության վրա:Մշակվում է երեխայի անհատական ուսուցման պլան՝ուղղված կարիքի բավարարմանը:Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթությունը կազմակերպել հանրակրթական ընդհանուր դպրոցում

՝անհատական ուսուցման պլանով,իսկ անհրաժեշտության դեպքում հատուկ ծրագրերով:
Անհատական ուսուցման պլանը(ԱՈԻՊ-ը) ուղեցույց է կամ միջոց ուսուցիչների, դաստիարակների,երեխաների հետ աշխատող մասնագետների,ծնողների համար:
Այն օգնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների անհատական ուսուցումը հանրակրթական դպրոցներում արդյունավետ կազմակերպելուն և նրանով հատուկ կարիքները բավարարելուն:
ԱՈԻՊ-ը կազմվում է դիտման և գնահատման արդյունքների և եզրահանգումների հիման վրա:

Հատուկ կրթական հաստատություններում և ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում պետական աջակցությունից օգտվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները:

- Խոսքի ծանր խանգարումներ, հնչյունահնչույթային և խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաներ
- Լսողության խանգարում ՝չլսող, թույլ լսող և լսողության կորուստ ունեցող երեխաներ
- Տեսողության խանգարում ՝չտեսնող, թույլ տեսնող, ուշ կուրացած շլություն ունեցող երեխաները
- Մտավոր հետամնացություն ունեցող երեխաներ
- Հենաշարժական համակարգի խանգարումներ ունեցող երեխաներ
- Հոգեբանական զարգացման խնդիրներ, ուսումնական ունակություններ զարգացման յուրահատուկ խանգարումներ ունեցող երեխաներ
- Վարքային և հուզակամային ոլորտի խանգարումներ ունեցող երեխաներ

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող համարվում է այն անձը,որի ֆիզիկական և մտավոր,հոգեկան զարգացման

առանձնահատկությունները խոչընդոտում են կրթական ծրագրերի յուրացմանը ,և որոնց ուսուցման կազմակերպման համար պահանջվում են համապատասխան հատուկ կրթական ծրագրեր և ուսուցման մեթոդներ ,ուսուցման անհատական տեխնիկական միջոցներ,կենսագործունեության միջավայր ինչպես նաև մանկավարժական ,սոցիալական և այլ ծառայություններ՝առանց որոնց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձի կողմից հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրերի յուրացումը դժվար է կամ անհնար:

Հանրակրթական ուսումնական հաստատությունում ներառական կրթական գործընթացի կառավարման հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները:

- Կրթական գործընթացում երեխաներին միմյանցից առանձնացնելու պատճառներ չկան

- Չի կարելի երեխաների նկատմամբ խտրական վերաբերմունք ցուցաբերել հաշմանդամության կամ սովորելու ընթացքում դժվարություններ ունենալու պատճառով:

Կրթության մեջ ներառումը ենթադրում է բոլոր աշակերտների կրթական կարիքների հավասար գնահատում ,դպրոցական ուսումնական և մշակութային ,համայքային միջոցառումներին աշակերտների ներգրավվածության աստիճանի բարձրացում,ուսուցման ընթացքում արհեստական խոչընդոտների վերացում և նրանում բոլոր աշակերտների ներգրավում,աշակերտների միջև առկա տարբերությունները ոչ թե որպես դժվար հաղթահարվող բարդություն,այլ որպես կրթական գործընթացին նպաստող հանգամանքի ընդունում ,աշակերտների համար դպրոցական պայմանների բարելավում,կրթությունը `որպես հասրակության մեջ մարդու լիարժեք ներառման և ինքնադրսևորման կարևորագույն բաղադրամասի ճանաչում:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների վրա.

- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հավասար իրավունք ունեն հանրակրթական հաստատության ընտրություն և պարտադիր պետական ծրագրերի յուրացման

- Կրթության առնաձնահատուկ պայմանների կարիք ունեղող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական ,հոգեբանական,սոցիալական և այլ ծառայություններից

- Երեխայի համակողմանի և բնականոն զարգացման նպատակով նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը `առանց ընտանիքից և հասարակությունից առանցնացման:

Ներառական կրթական միջավայր ձևավորելու լավագույն գրավականը համագործակցյային միջավայրի ստեղծումն է ինչպես դասարանում,այնպես էլ դասարանից դուրս,երբ կրթական գործընթացը կազմակերպվում և իրականացվում է ոչ միայն տվյալ ուսումնական առարկան դասվանդող ուսուցչի ,այլև դասարանի բոլոր աշակերտների,անհրաժեշտության դեպքում նրանց ծնողների ,հատուկ մանկավարժների ,հոգեբանների ներգրավմամբ:Փոխօգնության սկզբունքի վրա հենված խմբային ուսուցման մեթոդների ճիշտ և նպատակային գործադրումը հնարավորություն է ընձեռում ապահովել ոչ միայն համագործակցային ուսումնական միջավայր, այլև բարձրացնում է մատուցվող ուսումնական նյութի ընկալման մակարդակը ,աշակերտների միջև ձևավորում են գործնական -ուսումնական և ընկերային օբյեկտիվ հարաբերությունների:

Այսպիսով դպրոցում երեխաներին առանձնացնելու օրինական հիմքեր չկան: Երեխաները պետք է սովորեն միասին, դա օգտակար կլինի բոլորի համար:Պետք չէ նրանց պաշտպանել միմյանցից:Բոլոր երեխաներին պետք է կրթություն, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատելու և պատրաստվելու կյանքին:

Ներառական դպրոցի ճանապարհին

Փորձը ցույց է տալիս, որ կրթական ցանկացած կոշտ համակարգից երեխաների ինչ-որ մասը դուրս է մնում,քանի որ համակարգը պատրաստ չէ այդպիսի երեխաների ուսուցման անհատական պահանջմունքների բավարարմանը:Այս հարաբերակցությունը կազմում է դպրոցահասակ երեխաների ընդհանուր թվի 15%-ը,և այսպիսով դուրս մնացած երեխաները մեկուսացվում և հեռացվում են ընդհանուր համակարգից :Պետք է հասկանալ ,որ ոչ թե երեխաներն են անհաջողության մատնվում,այլ համակարգն է հեռացնում երեխաներին:

Ներառական մոտեցումները կարող են աջակցել այդպիսի երեխաներին ուսման մեջ հաջողության հասնելուն,ինչը նրանց համար լավ կյանքի հնարավորություններ կընձեռի:

Ներառական կրթությունը ընդհանուր կրթության զարգացման գործընթաց է,որը ենթադրում է բոլորի համար կրթության մատչելիություն `երեխաների տարբեր կարիքներին հարմարվելու առումով,ինչն ապահովում է սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների համար կրթության մատչելիություն:

Ներառական կրթությունը որդեգրում է երեխայակենտրոն մեթոդաբանություն`համաձայն որի բոլոր երեխաները ուսուցման տարբեր պահանջմունքներով անհատականություններ են: Ներառական կրթությունը դասվանդման և ուսուցման ոլորտում ջանում է մշակել այնպիսի մոտեցումներ ,որոնք ուսուցման տարբեր պահանջմունքներ բավարարելու հարցում կլինեն առավել ճկուն:Եթե ներառական կրթության ներդրած փոփոխությունների արդյունքում դասվանդումն ու ուսուցումն ավելի արդյունավետ դառնան ,ապա կշահեն բոլոր երեխաները:

Ներառական դպրոցներում ուսուցումը հնարավորություն է ընձեռում երեխաների ձեռք բերել գիտելիքներ մարդու իրավունքների մասին,իսկ դա հանգեցնում է խտրական դրսևորումների նվազեցման, քանի որ երեխաները սովորում են ճիշտ հարաբերվել իրար հետ,ճանաչել և ընդունել միմյանց տարբերությունները:

Ներառական կրթության իրագործմանն ուղղված բոլոր ջանքերը հենվում են իրավահավասարության գաղափարի վրա, եթե մենք դա անում ենք ելնելով խղճահարությունից կամ բարեգործական մղումներից,երբեք չենք կարող անհրաժեշտ արդյունքի հասնել:

Բոլոր երեխաներն էլ կարող են սովորել,պետք է ապահովել համապատասխան պայմաններ նրանց կրթության համար:

Դպրոցում երեխաներին միմյանցից առանձնացնելու օրինական հիմքեր չկան: Երեխաները պետք է սովորեն միասին, դա օգտակար կլինի բոլորի համար:Պետք չէ նրանց պաշտպանել միմյանցից:Բոլոր երեխաներին պետք է կրթություն,որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատելու և պատրաստվելու կյանքին:Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության ,հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը:

Ներառական կրթության առանձնահատկությունները և առկա դժվարությունները

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին սոցիալական գիտելիքների պաշարներին և փորձին հաղորդակից դարձնելու նպատակով անհրաժեշտ է կիրառել ուսուցման ձևերի և եղանակների հատուկ միջոցներ, շփման հմտություններ, յուրօրինակ մոտեցումներ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսուցման առավել հաջող ձևերից են ներառական ուսուցումը: Փորձը ցույց է տվել, որ նմանատիպ երեխաներն առավելագույն զարգանում են հասակակիցների միջավայրում, նրանց հետ համատեղ ուսուցման ընթացքում առանց ընտանիքից կտրվելու:

- Գոյություն ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական համակարգ ներգրավելու մի քանի ձևեր: Դրանցից են՝

- Նախապատրաստական աշխատանքներ տանելուց հետո, երբ նա հասցնում է բավարար մակարդակով յուրացնել ուսուցման հանրակրթական ծրագիրը, տեղափոխվում է հանրակրթական համակարգ:

- Ներառական ուսուցում, որը ենթադրում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մուտքը հանրակրթական հաստատություն՝համատեղ ուսուցումը շարունակելու սովորական խմբում կամ դասարանում իր հասկակիցների հետ միասին:

Ներառական կրթության անհրաժեշտությունը հիմնավորվում է հետևյալ առանձնահատկություններով՝

Մարդու իրավունքների և երեխաների իրավունքների հարցերում եղած պարտավորությունները պետք է հավասարապես քննարկվեն:

Կարևոր է իմանալ ներառական կրթության որոշ հանգուցային սկզբունքներ թեկուզ նրա համար, որ համակարգը <<չարտահանվի>> մեկ այլ մշակույթ և հանրություն:

- Երեխաները գնում են իրենց համայնքի /տան մոտ/գտնվող մանկապարտեզ և դպրոց:

- Վաղ միջամտության ծրագրերը իրականացվում են ներառման սկզբունքի հիման վրա:

- Մեթոդաբանությունը մշակվում է տարբեր ընդունակություններով երեխաների ուսուցմանն աջակցելու համար:

- Բոլոր երեխաները մասնակցում են այն բոլոր միջոցառումներին, որտեղ դասարանը և դպրոցական միջավայրը ներառական է:

- Անհատական ուսուցումը աջակցության է արժանանում ուսուցիչների, ծնողների և այլ մասնագետների համատեղ աշխատանքի շնորհիվ:

Ներառական կրթությունը օգնում է կանխելու երեխաների նկատմամբ խտրականությունը և սատարում է հատուկ պահանջմունքներով երեխաների:
Ներառական կրթության իրականցման ճանապարհին թե մասնագետները,թե ծնողները,թե երեխաները հանդիպում են բազմաբնույթ խոչընդոտների,որոնք ի հայտ են բերում մի շարք դժվարություններ ներառական կրթության ոլորտում/այն համարվում է գլոբալ օրակարգ/:
Դրանք բազմաբնույթ են.
Օրինակ՝

- <<Ներառական կրթության>>գաղափարախոսության ընկալման ոչ ճիշտ մոտեցում:
- Ներառումը պետք է անել կրթության որակը չգցելու ,այլ բարձրացնելու հաշվին:
- Չկան անհրաժեշտ պայմաններ և միջոցներ /թեքահարթակներ,կահավորված դասասենյակներ,անհրաժեշտ այլ միջոցներ/:
- Հասարակության բացասական վերաբերմունքը /երբեմն հասարակությունը օտարում է այս երեխաներին ,նույնիսկ նորմալ զարգացում ունեցող երեխաների մոտ ստեղծում են բացասական վերաբերմունք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ:
- Երբեմն բազմամասնագիտական թիմը չի համագործակցում միմյանց հետ ,որը շատ մեծ նշանակություն ունի ուսուցման գործընթացի հետագա աշխաանքների իրագործման և զարգացման համար:
  Այս քաղաքակրթության նոր մակարդակի թևակոխման գործում ,անչափ կարևոր է բոլորի կողմից ցուցաբերած հանդուրժողականությունը,համապատասխան մասնագետների առկայությունը,ովքեր կաշխատեն դպրոցում ցանկացած երեխայի հետ,կապահովեն ներառական կրթություն ստացող երեխաների մասնակցությունը ուսումնական մշակութային և համայնքային կյանքում:Այս գործում մեծապես կարևոր է նաև պետության `համապատասխան ռեսուրսների ներդրումը և պետական լծակների ճիշտ կիրառումը:

Ուսուցիչներին վերապատրաստելը և հետագայում աշխատունակ իրենց գործին նվիրված կադրեր ստեղծելը ,որորնց առաքելությունը կլինի ինտեգրելը բոլորին հասարակության մեջ՝հետագայում հնարավորություն ունենալով արժանավայել կյանք ապրելու:

Մեծ խնդիր է թեքահարթակների առկայությունը դպրոցներում,դպրոցների մի մասը փորձում է ԿԱՊԿՈՒ երեխաների կրթությունը կազմակերպել շենքի առաջին հարկում:Սակայն այդ մոտեցումը չի գործում միջին և ավագ դպրոցի պարագայում,որտեղ առկա են կաբինետային դասարաններ:

Սանհանգույցների հարմարեցվածություն:Հայտնի է ,որ ընդամենը Երևանի մի քանի դպրոցների սանհանգույցներ են հարմարեցված ԿԱՊԿՈՒ երեխաների կարիքների:Մյուս դպրոցներում առկա են տիպային դպրոցական սանհանգույցներ :

Սպորտդահլիճի հարմարեցվածություն:Որևէ դպրոց չունի հարմարեցված սպորտային դահլիճ,առավել ևս մասնագետ- ուսուցիչ ,ով կարող է պարապել ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների հետ:

Դասասենյակների հարմարեցվածություն.համապատասխան սեղան-աթոռների ,լայն փեղկով դռների առկայություն և այլն:Սա բավականին ծախսատար խնդիր է ,որը այսօր որևէ դպրոց սեփական միջոցներով չի կարող ապահովել:

Ի թիմս ոլորտում առկա մյուս խնդիրների ,առանձնապես մտահոգիչ է ուսուցիչների վերապատրաստումը,որը համակարգման և որոշակիության կարիք ունի:

Հայաստանում ներառական կրթության համակարգի ներդրման խնդիրներից մեկն էլ այն է ,որ այդ համակարգի ներդրումը կապվել է պետությունից լրացուցիչ գումար ստանալու ակնկալիքի հետ:Վերջին տարիներին բացահայտվել են մի շարք դպրոցներ ,երբ դպրոցներում արձանագրվել են յուրացումներ ,ներառական կրթության համար հատկացված ռեսուրսներն այլ նպատակներով են օտգագործվել:

Ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար,այդ թվում ԿԱՊԿ ունեցող,զարգացման առանձնահատկություններին համապատասխան,անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքի ապահովումն է:

Եզրակացություն

Եզրափակելով ուսումնասիրության արդյունքները՝ընդհանուր առմամբ ,հարկ է նշել ,որ ներառական կրթության համակարգը կարևորագույն քայլ է ավելի առողջ,հանդուրժող ու հոգատար հասարակություն ունենալու համար:Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման ,բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները:Եթե ներառական կրթության մտցրած փոփոխություններն ուսուցումը ավելի արդյունավետ դարձնեն,ապա կշահեն բոլոր երեխաները,այլ ոչ միայն կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցողները:

Ներառական կրթության իրականացման առավելությունների ու առկա դժվարությունների ուսումնասիրությունը ևս մեկ անգամ հնարավորություն տվեց առավել հստակ պատկերացում կազմել ներառական կրթության ,ներառման քաղաքականության ,այս ոլորտում հանրակրթական դպրոցների ձեռքբերումների ,առկա դժվարությունների ,բացթողումների և այլնի մասին:

Բազմաթիվ ուսուցիչներ կարծում են, որ կրթական հատուկ կարիքներով երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլիներ<<հատուկ կրթություն>>: Սակայն փորձը ցույց է տալիս ,որ հատուկ կարիքներով երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենը անհրաժեշտ է որակյալ,հասկանալի և մատչելի դասվանդում,որը և նպաստում է աշակերտների ակտիվության բարձրացմանը:

Սա այն է ,ինչ պետք է անի ուսուցիչը `բոլոր երեխաներին որակյալ կրթություն տալու համար:Այս ամենից ելնելով `հանգեցինք հետևյալին:

Ներառումը մոտեցում է,որի դեպքում պետք է հաշվի առնել աշակերտների բազմազանությունը,երեխային ընդունել այնպիսին ինչպիսին նա կա և ուսումնական պլաններն ու նպատակները հարմարեցնել սովորողների ընդունակություններին ու պահանջներին:Այս պրոցեսում կարևոր է բազմամասնագիտական խմբի յուրաքանչյուր անդամի ,ծնողների և նրանց դերը ,ովքեր իրենց փորձն ու գիտելիքներն են ներդնում ,որպեսզի յուրաքանչյուր երեխա կարողանա սովորել իր համար առավելագույն օգուտով:Մնում է ակնկալել և հուսալ ,որ ներառական կրթության ինստիտուտը կդառնա այն առաջին քայլը,որը կապահովի հատուկ կարիքներով անձանց լիիրավ ինտեգրումը հասարակություն:

Առաջարկություն 1 :ՀՀ-ում ներառական կրթության կազմակերպումը պետք է համատեղ ջանքերով անցում կատարի դեպի բոլորի համար հավասար հնարավորությունների ստեղծման միջոցով որակյալ կրթության մատուցմանը:

Առաջարկություն 2 :Անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել բազմամասնագիտական թիմի կազմը և գործառույթները:Վերջինումս պետք է առնվազն ընդգրկված լինեն հատուկ մանկավարժ,սոցիալական աշխատող,հոգեբան և լոգոպեդ մասնագետները:Բազմամասնագիտական թիմի կազմը պետք է պարտադիր լինեն բոլոր ներառական դպրոցներում `անկախ ԿԱՊԿՈՒ երեխաների քանակից և կրթության առանձնահատուկ կարիքների բնույթից:

Առաջարկություն 3 :Պետք է ավելացնել վերապատրաստումների թիվը `շեշտադրելով գործնական գիտելիքները և հմտությունները:

Գրականության ցանկ

1.Ազարյան Ռ.Ն.<<Հատուկ մանկավարժություն>>

2.Ներառական կրթության ռազմավարություններ/դասագիրք/

3. Ինչպես խթանել ներառումը դասրանում մեթոդական ուղեցույց -ձեռնարկ/Սվաջյան Ա.Հ.

4. Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն <<Ներառական կրթություն,ժամանակակից խնդիրներն ու մարտահրավերներն>>:

5.Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին ՀՀ օրենք,2014թ

6. https://www.aravot.am/2015/11/16/629432/